



On the occasion of the Pontifical visit of

HIS HOLINESS KAREKIN II

Catholicos and Supreme Patriarch of all Armenians

His Eminence

ARCHBISHOP HOVNAN DERDERIAN

Primate of the Armenian Holy Apostolic Church of Canada

and THE DIOCESAN COUNCIL

Present

The World Premiere Performance

Oratorio "Sourp Khatch"

PETROS SHOIJOUNIAN, Composer

NURHAN ARMAN, Conductor

THE ELMER ISELER SINGERS

Lydia Adams, Music Director

SINFONIA TORONTO

Nurhan Arman, Music Director


Aline Kutan
Coloratura Soprano

Allyson McHardy
Mezzo-Soprano

Joseph Kaiser
Baritone

Monday, May 21st, 2001 at 7:30 p.m.

St. Michael's Cathedral, Toronto



ՀԱՅ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տայաստանեայց Առաքելական Եկեղեցին կը հանդիսանայ քրիստոնէական աշխարհի հնագոյն եկեղեցիներէն մէկը: Ան կը կոչուի Առաքելական, որովհետեւ, ըստ աւանդութեան, Քրիստոսի երկու առաքեալները՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս, գալով Տայաստան քարոզած են նոր կրօնը:

Դ. դարու սկիզբը, Գրիգոր Պարթեւի շնորհիւ թշկուած Տրդատ Գ թագաւորի հրամանով, քրիստոնէութիւնը կը հռչակուի պետական-պաշտօնական կրօն, 301 թուականին, եւ Գրիգոր Պարթեւ, որ կը դառնայ հիմնադիրը Տայ առաջին քրիստոնէայ եկեղեցոյ, կը կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ հանդիսանալով Տայոց առաջին Տայրապետը:

Տայաստանի քրիստոնէացումով եւ մէկ դար յետոյ՝ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած Տայոց Այբուբենով, պատմական զարգացման բոլորովին տարբեր ընթացք մը կը ստանայ երկիրը. աննախընթաց ծաղկում ու վերելք կ'ապրի երկրի կրթական-մշակութային կեանքը եւ չնայած դարեր շարունակ տեղի ունեցած հալածանքներուն եւ անբաժնութիւններուն, հայ ժողովուրդի ստեղծած կրթողային յուշարձանները

արժանաւոր տեղ են ապահոված իրենց առ այսօր, բաղաբալկիք ժողովուրդներու շարքին:

Տայաստանեայց Առաքելական Եկեղեցին կը պատկանի Արեւելա-քրիստոնէական Ուղղափառ Եկեղեցիներու այն խումբին, որոնք իբրեւ հաւատքի դասանալ կը ճանչնան 325թ. Նիկիոյ Տիեզերական Ժողովի ընդունած բանաձեւը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի հիմնած եկեղեցին՝ Սուրբ Էջմիածինը, Մայր Աթոռն է՝ նստավայրը Տայոց Տայրապետին, որ կը կոչուի Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Տայոց: Անոր ենթակայութեան տակ են Տայաստանի եւ Սփիւռքի չորս չորս տասնեակ թեմեր: Հոգեւորականներէ եւ աշխարհականներէ կազմուած Ազգային Եկեղեցական Ժողովն է որ կ'ընտրէ կաթողիկոսին, գաղտնի քուէարկութեամբ եւ ցնահ իշխանութեամբ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչին առ այսօր Մայր Աթոռը ունեցած է բազմաթիւ գահակալներ. 132-րդ Գահակալը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Տայոց Վեհափառն է: